ՆԱԽԱԳԻԾ

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ - Ն

ՍՊԻՏԱԿ ՔԱՂԱՔԻ ԹԱՂԱՄԱՍԵՐՈՒՄ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ

ՏԱՐԱԾՔՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 28-ի թիվ 42-Ա որոշմամբ «Սպիտակ համայնքի բնակարանների և ենթակառուցվածքների սպասարկման գրասենյակ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաստիքացուցակում առկա 9 լիազոր ներկայացուցիչների հաստիքները կրճատվել են և սահմանվել են 6 լիազոր ներկայացուցիչների հաստիքներ՝ Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է***.

1. Սպիտակ քաղաքի թաղամասերում սահմանել հետևյալ սպասարկման տարածքները.

1) բազմաբնակարան բնակելի շենքեր- ընդգրկում է քաղաքի բոլոր բազմաբնակարան բնակելի շենքերը

2)Նոր քաղաքի թաղամասեր- ընդգրկում է Հարավ-Արևմտյան թաղամասը՝ Շվեյցարական, Իտալական, Ուզբեկական, Գրիգոր-Լուսավորիչ, Վարպետաց, Էստոնական, Նորվեգական թաղամասերով

3) Կոնդ և Առափնյա թաղամաս- ընդգրկում է Տաշիր, Կոնդ և Առափնյա թաղամասերը՝ Ս" Ավետիսյան, Թորոսյան փողոցներով

4) Հարավային թաղամաս- ընդգրկում է Պանրագործներ, Թումանյան, Սայաթ-Նովա, Քըրք-Քըրքորյան փողոցները, Առափնյա, Բանավան, Գերմանական թաղամասերը

5) Կենտրոնական թաղամաս- ընդգրկում է Շահումյան, Թորոսյան, Ալեք-Մանուկյան, Ս" Ավետիսյան, Ոփյան, Չարենց, Խնկոյան փողոցները, Գործարանային թաղամասը

6) Հացամթերքներ և Այգեստան թաղամաս- ընդգրկում է Օդկայան, Կայարանի, Այգեստան թաղամասերը, Շիրակի խճուղին, Վանաձորի խճուղին